ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «15» նոյեմբերի 2023թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 59-Ա/Ք

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ԱՐՏԵՐԿՐԻ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԻՆՏԵԳՐՈՒՄ 2024» ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգով», հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի հուլիսի 12-ի N 28-Լ հրամանի հավելվածի 18-րդ մասի 7-րդ կետը և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի նոյեմբերի 13-ի N 2363-Ա/2 հրամանը՝ «Հայաստանի Հանրապետության գիտական համայնքին արտերկրի գիտնականների ինտեգրում 2024» կազմակերպելու համար՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ

1. Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնին (պետ՝ Շուշանիկ Աղաբեկյան)՝ ապահովել Մրցույթի հայտարարության հրապարակումը, մրցույթի հրավերի փաթեթի և արդյունքների տեղադրումը Կոմիտեի պաշտոնական ինտերնետային կայքում:
2. Կոմիտեի գիտական գործունեության կազմակերպման վարչությանը (պետի պարտականությունները կատարող՝ Անուշ Հովհաննիսյան)՝
   2.1. ապահովել մրցույթի հայտ ներկայացնողների համար խորհրդատվության տրամադրումը,

2.2. կազմակերպել հայտերի թղթային տարբերակների ընդունումը,

2.3. ապահովել մրցույթին ներկայացված հայտերի գիտական փորձաքննության կազմակերպումը,

2.4. կազմակերպել մրցույթի արդյունքում ֆինանսավորվող հայտերի ղեկավարների հետ պայմանագրերի կնքումը,

2.5. ապահովել մրցույթի արդյունքների վերաբերյալ հայտի ղեկավարներին սահմանված կարգով իրազեկումը:

3. Կոմիտեի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժնին (պետ՝ Տիգրան Գալստյան)՝

3.1. սահմանված կարգով ապահովել մրցույթին ներկայացված հայտերի գիտական փորձաքննությունն իրականացնելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների տրամադրումը,

3.2. սահմանված կարգով ապահովել ֆինանսավորման երաշխավորված գիտական հայտերի ֆինանսավորումը:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Կոմիտեի գլխավոր քարտուղարի լիազորություններն իրականացնող Լևոն Ֆարմանյանին:

ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆ